ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14.10.2025թ Սևան համայնք Լճաշեն բնակավայր

2025թ հոկտեմբերի 14-ին, ժամը 12:00-ին ,ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ <<Գոգ-Արս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Լճաշենի բազալտի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասում կատարվելիք օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության վերաբերյալ հանրային քննարկում:

Հանրային քննարկումը վարում էր Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Վահան Մարգարյանը, ներկայությամբ՝ <<Գոգ-Արս>> ՍՊԸ տնօրեն Ս. Նավասարդյանի, ինժեներ-երկրաբան Մ. Հարությունյանի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության վարչության գլխավոր մասնագետ Հակոբ |Հարությունբանի, մարզպետի աշխատակազմի Գյուղատնտեսության և ՇՄՊ գլխավոր մասնագետ Դավիթ Զանգեզուրյանի, արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Հարությունյանը.

Լսեցին՝

Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Վ. Մարգարյանին, ով ներկայացրեց հանրային լսման նպատակը, այնուհետև խոսք տրամադրվեց մասնագետ Մ. Հարությունյանին, որն էլ ներկայացրեց աշխատանքների հերթականությունը և ուսումնասիրության նպատակները:

<<Գոգ-Արս>> ՍՊԸ տնօրեն Ս. Նավասարդյանը ներկայացրեց համայնքի վարչական սահմաններում նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ծրագիրը: Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել և հայտնաբերել բազալտի նոր պաշարներ, որի արդյունահանումը հետագայում կնպաստի համայնքի զարգացմանը, կիրականացվեն սոցիալական ծրագրեր և կկատարվեն նոր ներդրումներ:

Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ Արշակ Բաբայանը, Լեոնիկ Հովհաննիսյանը, Վազգեն Թադևոսյանը,որոնց կողմից բարձրացված հետաքրքրող հարցերին սպառիչ պատասխաններ տվեցին ինչպես վարչական ղեկավար Վ . Մարգարյանը, այնպես էլ ինժեներ-երկրաբան Մ. Հարությունյանը և ՍՊԸ-ի տնօրեն Ս. Նավասարդյանը;

Ամփոփելով խորհրդակցության արդյունքները՝ Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար Վահան Մարգարյանը նշեց նախատեսվող աշխատանքների կարևորությունը բնակավայրի հետագա սոցիալ-տնտեսական զարգացման համար: Փաստվեց նաև, որ աշխատանքների ընթացքում պետք է պահպանվեն համայնքի

բնակիչների շահերը և բնապահպանական համապատասխան նորմերը: Համայնքը տալիս է իր նախնական համաձայնությունը՝ կատարելու երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ բնակավայրի վարչական սահմաններում:

Կից ներկայացվում է տեսաձայնագրությունը և մասնակիցների ցուցակը

Ձեռնարկող՝

<<Գոգ-Արս>> ՍՊԸ-ի տնօրեն Սամվել Նավասարդյան_____

Լճաշեն բնակավայրի վարչական ղեկավար

Վահան Մարգարյան_____

Ինժեներ-երկրաբան

Մանվել Հարությունյան_____

Արձանագրող՝

Սևանի համայնքապետարանի

Աշխատակազմի առաջատար մասնագետ

Մերինե Հարությունյան_____